նակ կարծէ։ Մարդկանց ընկերութիւնը թողածին պէս՝ սիրտը ուրախութեամբ կըլեցուի, եռանդը կըվառի, յոյսը կըսաստկանայ, և կըձանչնայ որ Աստուած զինքը միշտ կըպաշտպանէ, և բոլոր իր սրտին ցաւերը կըբանայ Աստուծոյ առջև ինչպէս մէկ որդի մը իր հօրը։

Երկրորդ տեսակ գործքն է ժամանակ անցընելու համար՝ անմեղ զուարճութեանց հետ զբաղիլ։ Թէպէտ և կերևնայ որ վայելուչ բան չէ մէկ խելքով ստեղծուածի մը անանկ բաներով զուարճանալ, որոնց աղէկութիւնը շատ շատ ան է՝ որ գէշ և վնասակար չեն։ Մարդ կըտարակուսի թէ խաղի թուղթն ալ աս տեսակ զուարճութեանց կարգը սեպէ՞ թէ չէ. բայց քիչ մը խելքէ դուրս բան կերևնայ որ խելացի մարդիկ օրը տասուերկու ժամ անցընեն մէկ տրցակ՝ խաղի թուղթը խառնելով ու խառնելով, և որոշած թիւերուն լցուիլը պատճառ բերելով՝ իրարու ձեռքէն ստակ առնելը իրաւունք և զուարճութիւն սեպել, և ան պատկերներուն վրայ մտածել ցաւելով կամ խնտալով։

Մինթէ աս տեսակ մարդիկները կենաց կարճութեանը վրայ գանգատելու իրաւունք ունին։ Թատերական խաղերն ալ աս տեսակ զուարճութեան, մանաւանդ թէ խրատի նիւթ ալ կըլլային՝ թէ որ ինչ կարգով ինչ և վախճանով հնարուած են՝ նոյն զգուշութիւն կատարուէին։

Բայց մարդս ամէն բանէն աւելի կըզուարճանայ ճշմարիտ հաւատարիմ բարեկամի մը հետ խօսելու ատեն։ Դաքինի և խոհեմ բարեկամ ունենալուն նման երջանկութիւն չկայ աշխարհքիս մէջ։ Նոր ընկերութիւը միտք կըբանայ, կըմխիթարէ, նոր խորհուրդներ միտքդ կըձգէ, առաքինութեան սէրը կըվառէ սրտիդ մէջ, բարի մտածմունքներով կըզարդարէ միտքդ, կիրքերդ կըհանդարտեցընէ, և աւելորդ կարծուած ժամանակները օգտակար կընէ քեզի։ Անանկ ճշմարիտ բարեկամի մը հետ վարուելէն ետքը պէտք է նաև ընկերութիւն ընել անոնց հետ որ կրնան կրթել զմեզ և զուարճացընել. աս երկուքը՝ կրթութիւն ու զուարճութիւը գրեթէ միշտ մէկտեղ կըգտնուին։

Ուրիշ շատ տեսակ ատեն անցընելու հարկաւոր բաներ ալ կան որ պէտք էր աւելի շատցընել՝ թէ որ կարելի ըլլար հարկաւոր եղած ատենը գործածել տալ, քան թէ պարապ կեանք անցընել և յանկարծ միտքը ընկած կիրքերուն հետևիլ։ Մէկն որ երաժշտութեան, պատկերահանութեան կամ ճարտարապետութեան սէր ունի, կարծես թէ մէկ զգայարանք մըն ալ ունի ուրիշ մարդիկներէն աւելի. անով երբեմն կըզուարճանայ, կըզբաղի։ Ծաղիկ հոգալ, ծառ տնկել, պարտէզ զարդարել, ու երկրագործութիւն արհեստի ետևէ ըլլալը թէպէտև հարուստներուն աւելորդ բան մը կերևնայ, բայց ասոնք ատենը անմեղութիւ անցընելու մեծ նիւթեն, և շատ հարկաւոր ու զուարճալի անոնց որ աս բաներուս ետևէ կըլլան։ Այս տեսակ զուարճութիւններուն մէջ ամէնէն աղէկն է օգտակար գրքեր կարդալ, ուսման հետ ըլլալ, և նոր գիտելիքներ միտք առնել. ասոնցմով մարդուս կեանքը կերկրնայ։

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Եղծ կարծեաց անմաքառելիան Հայոց 1։

ՀՅՕԹԱՐԱՓՈՓԹՍ այս և ըլլամիտ գումարումն վսեմական կաճառոյս՝ կիրս ներհակակիրս յիս զարթուցանէ, զվարանս ասեմ և զքաջալերութիւն. վարանս, զի որ 'ի համօրէն ժողովս Հայկազնեայց ընդ առաջինն է իմաստութեամբ, ահա զնչանի յունկնդրութիւն նուաստիս բանասացութեան. և քաջալերս, զի զորմէ բուռն հարեալս է ճառել՝ զնորին զարդիւնն 'ի ձեզ ճշգրտիւ նկատեալ տեսանեմ. որպէս զի եթէ և խուն ինչ կայծակն յանօսրութենէ իմաստիցս ընդոստուցեալ 'ի ձերդ խառնեսցի խարոյկ անշնչանելի, ձեզ փառք յա-

1 Թէոպէ։

1 Տէս օրագրի 287 երէսը։

ճախեսցեն, և ինձ խնդութիւն։ Եւ կարի իսկ քաջ։ Սիրաք որ քան թէ զոգոյս տուրեաւ՝ զաղ-գին և զհայրենեաց չնչեն զսէր, ոչ կարօտանան խոովքս բանիւք զկենդանութեանն իւրեանց ճա-նաչել զճարակ. սակայն ոչ աւելորդ ճիգն ինձ և զուր գրեսցի ջան, եթէ 'ի հաստատել անդ կրկին զսէրդ 'ի միտս ձեր լուսաւորս, դուն գործեցից և յայլոցն մտաց խլել և 'ի բաց տարագրել զկրճիմն վնասակար զապականիչն ազգասիրութեան։ Եւ արդարև զինչ առաւել խոչընդոտն կայցէ գեղե-ցիկ առաքինութեանս, քան զնաբեպատիր զայն վարկած՝ եթէ անմիաբան իցէ ազգ Հայոց. վար-կած որով ոչ սակաւք 'ի մերազնեայցս զընդաբոյսն զայն ընչաբեալ ազգասիրութիւն զանձանց և զայլոց ընկլուզին 'ի խորս յուսահատութեան։ Շնորհեցէք ինձ ապա ընդ երկայնամիտ ունկնդրու-թեանդ և զախորժ ակնարկութիւն, որպէս զի կա-մակար վստահութեամբ յանդիման կացուցից, զի Հայք ոչ գտան թերի 'ի միաբանութենէ քան զայլ ազինս, և զի մանաւանդ յոյժ միաբանասէրքդ հանդիսացան քան զյոլովս 'ի բարենչան ազգաց։

Ա

ՅԱՆԴԳՆՈՒԹԵԱՆ արդեօք Թուեսցի ձեռնարկս՝ որոց 'ի կարծիս անմիաբանութեան Հայոց հաս-տատեալք իցեն. իբրու եթէ ընդ այնպիսի կար-ծեաց 'ի պայքար մտանիցեմ՝ որ ժամանակաց հնու-թեամբ և վկայից յոլովութեամբ կանգաղեալ և աննկուն իցէ։ Այլ ճշմարտութեանն ջատագով երկնչիցի՞ 'ի կարծեաց հնացելոց և 'ի դիւրահաւա-նից բազմութէ. ահա և հասարակաց կարծիք բազ-մագարեան եթէ արեգական ջերկրաւս Թաւալիցի՝ ոչ ինչ սանանեցին Գալիլեայ, և ոչ խափան ինչ եղեն նմա առ 'ի չասելոյ զերկիրս զայս արբանեակ արևու։ Բայց մեծ է ինձ այս, զի ոչ նոր ինչ հա-մարիմ ասել ես առ ամենեսեան, այլ առ անհա-ւանս ոմանս, առ որս իբրու յանհիմն աւանդու-թենէ տեսանեմ զկարծիսն փոխանցեալ։ Յոլովք այնոքիկ են 'ի սոսա, որ զազգն և զանձինս դա-տապարտ առնեն, ոչ այլ ինչ ունելով պատճառս՝ բայց զի և այք զնոյն գործեն. յոլովագոյնք ևս հարևանցի և կիսի կանխակալ կարծեօք անցեալ ընդ վեպապազին, և ոչ մանր քննեալ զդէպս ինչ իրաց, վնասապարտ զազգն համարին, և զգոյշն և կամ զուտարին յանցուած զամենեքումբք շփեն. և սոքա այսպիսիք հազիւ զիւրեանցն, իսկ զայլոց ազգաց բնաւ ոչ քննեն զքաղաքավարութիւն. և զինչ տա-բադէպ Թուիցի, եթէ Թիւր վարկածք հնութիւն այսու և հաստատութիւն առնուցուն։

Սակայն եթէ ծանուցս ինչ Թուիցիմ ես բար-բառել, կամ թէ վեր 'ի վերոյ բանիւք զմիտս ճրգ-նիցիմ մոգել զունկնդրաց, Թող հրամայեսցէ պատ-կառելի ժողովս, և կանգնեսցի կացցէ ինձ դատա-խազ՝ որ հակառակ կողմանն կամիցի անցանել Ջատագով. և դատաւոր կացցէ ոգին Հայաստանի զարդարութեան բարձեալ զկշիռս։ Աղէ մատիցէ ցուցցէ ոսոխն իմ, ով է որ յանձն առնուցու ան-միաբան զազգ իւր անուանել՝ և ոչ զանգիտեսցէ արատ մեծ դնել իմաստութեան իւրում, Թող թէ ազգասիրութեան։ Եթէ 'ի պատմաբանից զոք ազ-գին կարծիցէ համաձայնս ինչ մտաց իւրոց դատ-նել բարբառեալ, զի՞ է զի ոչ քննէ և զսիրա վնաս-գրին, մի արդեօք հանգոյն ամենայն մարդկան և կամ ևս առաւել՝ ընդ կարծեաց և ընդ կրիւք դրա-ւեալ, և 'ի վտանգաց ժամանակին նեղեալ, առ դառնութեան ոգւոցն կշտամբանս ինչ կուտեալ իցէ 'ի գլուխս ազգին. այլ ոչ զոք անշուշտ գտցէ նա յամենայն պատմագիրս մեր արդարակորով և բուսոյ բարուց ազգին քաջահմուտ՝ քան զՅսրե-նեան ծերունին, որ և նա անաչառ՝ զի մի ասի-ցեմ խստագոյնս՝ կշտամբէ զժողովուրդն և զիշ-խանս, այլ ոչ ախորժէ անմիաբանս անուանել զնո-սա. նա և այնչափ հակառակ է կարծեացն, զի և զհամախոհութիւն նոցա 'ի գործ անպատշաճ ըստ ուղիղ տեսութեան՝ չար միաբանութիւն կոչէ, զի մի և մի բնաւ տացէ քեզ զանմիաբանութեան կարծիս։ Եթէ մինչև ցՄովսէս խորենացի միաբան էր ազգն, և յետ այնորիկ ոչ, ապա առժաման ինչ է ախտդ, և առ օրին դեղով բուժիցի. և եթէ ոչ այդպէս, ապա բնածին ինչ ախտակրութիւն. և հաստիչ բնութեանս ստգտանելի ճանաչի. իսկ եթէ դարձեալ ոչ բնածին իցէ, Թող ցուցցէ ա-պա ոսոխն մեր զբարագուշակ զայն դար և զարի յորում ճակատագրեցաւ անմիաբանութիւն Հայ-կեան սերնդոց։

Ի բաց Թողեալ ուրեմն զկնճիռն ժամանակաց, 'ի հանդէս գործոցն մատիցուք։ Եւ ոչ գիտեմ յուն և տասն դարս անդ Հայկազանցն հարստութեան զինչ ինչ առնել յանդիման՝ յորում հեռք ան-միաբանութեան երևիցին. զսպանումն արդեօք Հայկակայ յամբոխս ինչ, այլ չգիտեմք զերացն ըզ-պատճառս։ Մինթէ առ Արշակունիսն եկեալ, զնմանօրինակ մահ Արտաշիսի. և ահա նոյն անը-տուգութիւն պատճառացն։ Կամ թէ արդեօք զատստամբել մանկանն Տիգրանայ նախկին օրինակ անմիաբանութեան առնուցու հակառակորդն մեր. և զնաՀդ չառնու ինչ ակն անկատարութեան հա-սակի նորա, և երկիւղն Հռովմայեցւոց, և խա-բեբաստիր յուսոյն դիւր գտանելոյ 'ի նոցունց. Թող զի անձին մանաւանդ քան թէ այլում ումք վնասեաց այնու մանուկն։

Ոչ 'ի զուր ասէ առակն, եթէ ամենայնի կրկին են կերպարանք. այլ որ 'ի խնամս չարին հաստա-տեալ է՝ յաճախ զչարն և ոչ զպատրուակեալն ընդ նոմաւ տեսանէ զբարին։ Սանատրուկ և Երուանդ յաչս ոսոխին մերոյ շահատակք անմիաբանութեան գտանին. այլ սոքա անիրաւեցան առ տունն արքայի քան առ ազգն, որում խնամարկու երևե-ցան. զՍանատրուկ նա ինքն Աբգար խմաստախոն այր՝ անգիտութեամբ ելն գոգցես յայն ամբարշ-տաւորութիւն, որով իրաւացի գրէր նա և զպայ-ծատութեանն ձեռներիցութիւն. զնովին փառաց և Երուանդ համարձակեաց Թեակոխել. իսկ որ առ նոմաւ հակառակամարտս կռիւ Արտաշիսի և հարուածիլ Արգամայ՝ գործ գժուարակնճիռն է 'ի լուծումն, և ոչ ստգիտա անմիաբանութեան. քանզի Երուանդ վասն խնամոց և շինութեան աշ-խարհին, և Արտաշէս վասն արքայական սերնդի. դեանն՝ իրաւունս ունէին 'ի բարձ իշխանութեան. Երուանդ իբրև զուսին ամենական լուսոյն լինքն դարձուցանէր զսիրտ և զգութ ամենեցուն, և Արտաշէս որպէս զարեգական լուսապայծառ 'ի ծայրից երկնից և ծովու շող արձակէր 'ի դէմս ամենեցուն. անմարթ էր նմա Թիկունս դար-ձուցանել, և սմա հրաժեշտ տալ. արդարութիւն

վճարեաց զգործն՝ որ սակաւ ինչ պարտէր նմա։

Ոչ կարեւոր ինչ վարկանիմ 'ի հանդէս ածել զդրդիւռ որդւոց սորին Արտաշիսի ընդ միմեանս. զի առաւելագանց գորով ծնողաց առ որդիս յաւուրց անտի Դաւթի և Կիւրոսի զբազումս 'ի մեծազօր և 'ի զգօն թագրաց թերացոյց 'ի քաջդաստիարակութենէ որդւոցն։ Հապա 'ի քնին առցուք զկատարելոց արանց զաւրիս, զիշխանացն այնոցիկոր թագուն մահուամբ մատչին առ Ղեստոր հայաստանեայցս պետից, առ Ցրդատիոս մեծ. ո՜հ, քանիսիմ ՝ի յիշատակ եղերական տեսլեանն. և զիմրդ իցէ ինձ արդարացուցանել զոր առ 'ի խղճէս դատապարտ առնեմ։ Դատապարտեմ, այո՛, այլ ոչ առ խէթ ինչ անմիաբանութեան. զի մոլութիւն ախտից զգլխեաց զնոսա. անհամբոյրք էին, անագորոյնք և տիրադաւք, այլ ոչ յանմիաբանութենէ ցնորեալք. զի թէ առ անմիաբանութեան ինչ ըմբոստանային, ո՞չ յարիւն իսկ թաթաւեալ էր նոցա զգահն, և բացէ 'ի բաց մերժեալ զխոսրով զթերացեալն 'ի հօրն լաւութեանց առ հասարակ։

Զի՞նչ ասասցուք և զվերջնոցն, որ ոչ եթէ զանխլաբար դարան գործեն կենացն Արշակայ, այլ աշխարհախուսմբ բանակաւ գիմեն 'ի վերայ նորա. միթէ միաբանք իցեն և ասա՛... Այո՛, և ասա միաբանք. զի ոչ 'ի վերայ թագաւորին գումարեալ կան, այլ ընդդէմ առն բռնացելոյ 'ի վերայ մարդասիրութեանն օրինաց. միաբանք են յիւրեանս, միաբանք ընդ ժողովրդեան, միաբանք ընդ հայրենիս։ Անմիաբան յայնժամ էին, յորժամ լուռ ևէթ կալով ամենեցուն՝ տաղտկացեալ յարքայէ ինքնիշխան լինէին տեսլեք, և ժողովուրդն 'ի բազումս կոտորէր։ — Այլ՞ ո՞ր մոռացութիւն ապշեցոյց զիս. նախարարացն պաշտպան կացեալ, և զներսիսիս ապիտ ինչ առնիցեմ։ Քաւ յինէն. զներսէս գովեմ և յոյժ գովեմ, այլ և զնախարարեանն ոչ անմասն առնեմ 'ի գովութենէ. նոքա զայն արարին որ իւրեանց էր անկ, զինուն Արիսի ահացուցեալ զթագաւորն. և զներսէս զիւրն արար, քրիստոսեան զինուն երկուց գնդիցն միանգամայն եղեալ յաղթական։ Ո՞րպէս անմիաբանք իցեն ընդ տեառն իւրեանց արք որք և 'ի մարտ ընդ Պարսից մտեալ, և զամենայն այր սպանեալ առ 'ի նոցանէ՝ նմա նուիրեին 'ի զոհ, «Առ Արշակ քաջ» ասելով։

Այլ է ապա առեալ զոք, և այլ առեալ զբարս ուրուք. այն սխմարաց է գործ, իսկ այս խմաստնոց և զգաստից. այլ աւա՜ղ զի սակաւք են որ գիտիցեն զմարդ և զկիրսն սոսկ տեսանել։ Այսպէս իմն ահա և առ Արտաշիսիս վերջնով. նախարարացն ոչ յանառակութենէ ևէթ նորին դարշացեալ էր, այլ 'ի տանէ իսկ թագաւորին, և երկընչէին միւս անգամ տեսանել զաւուրս Արշակայ և Պապայ։ Խորհեցան զՊարսիկն յորոյ խիթային 'ի մեռալուտ գալստենէն՝ կամելն կոչել. զի թէ թագաւորն ոչ զգաստասցի, գոնեա ազգն 'ի գիւրութեան վայելեսցէ, իբրև ոչ բռնութեամբ ինչ անկեալ ընդ լծով. ոչ չար էր գիտութիւն նոցա, այլ թիւր էր տեսութիւնն. յերկայնմտութիւ վերջացեալ գտան քան 'ի միաբանութենէ. անդ վրիպեցին՝ ուր ոչն անսացին Սահակայ, քանզի թերի էին 'ի հանճարոյ և յընդարձակութենէ մտաց նորին։ Անմարթ էր նոցա՝ նորուն յստակահայեաց մարգարէական բբաջն զապառնիսն նշմարել. և մեծ եղեն մեղք նոցա առ մեծաւ ուղղութեամբն Պարթևին, որպէս և խաւարչտին մռայլ առ լուսոյն պայծառութեան առաւելապէս յանդիմանի։

Զի՞նչ այլ ինչ արդեօք, բայց այս թիւր տեսութիւն կարձմտութեան խորեաց և զվասակ զդրօշակիր անմիաբանութեան Հայոց, զոր աւազական ձայնիւ մեծի Երիցուն անմիտ վաճառական կոչեմ և ես քան չարամիտ գաւառական. զի թէ յառաջին խորհրդեան իւրում յաջողեալ էր նորա, թերևս և շնորհապարտ անձին կացուցանէր զաշխարհս Հայոց, իբրու անդէն վերականգնողն թագաւորական գահուն. այլ զի հակառակութիւն կրեաց, որ բազում անգամ ընդոստուցանէ զմարդ և 'ի տարադէպ կարծիս, անկաւ 'ի փառասիրութենէ խորխորատ. անկաւ 'ի հաւատոց, ապա և 'ի մեծամեծ չարիսն համարձակեաց անվեհեր։

Մի՛ ինչ կասկածեսցէ դատախազն մեր, եթէ մոռացուք զանցս իրացն որ առ Բագրատունեօք։ Ո՞վ ոք ոչ գիտիցէ զվտանգ ժամանակին։ Այլ նա յայն իսկ պնդեալ, ընդէր ոչ միաբանեցին, ասէ, իշխանքն մեր շունչ 'ի բուին մարտնչել 'ի վերայ աշխարհին, յամենուստ 'ի թշնամեաց նեղելոյ։ — Արդարև զօրեղ հարցաբանութիւն. այլ հզօրագունի վերճակեալ պատասխանուոյ։ Քանզի ո՞չ ապաքէն այն ինչաք որ սակս բաժանելոյ ոմանց՝ յոյժ փոքր էին առ արդասեօք բարեաց միաբանիցն 'ի նմին իսկ 'ի բազմավտանգ ժամանակին, յորում Խուզիմայք և Ափշինք Յուսուփք և բիւր մարգասանք ոք 'ի նեղ արկեալ էին զտուն Աշոտոյ։ Զիմրդ հնար էր կանգուն կալ նմա յայնչափ ազէտս զամս երկերիւր, եթէ ոչ միաբանութիւն իշխանացն զօրավիգն կայր պետութեանն։ Սակայն իբրև զվերջին հարուած ազգու կշռէ ընդդէմ մերոյ վարկածիս ոսոխն այսպիսի ինչ. եթէ միաբանասէր էր ազգդ Հայոց, ասէ, ընդէր բնաւ անմիաբանութիւ ստգտանք տեղի ունիցին 'ի նմա։ — Արդ գոչեցիլ և ես. ընդէր և դու, ո՛վ քաջ, այդչափ խիստ և անողոք, եթէ ազգասէր զանձն խոստովանիս. իսկ եթէ և 'ի խաւութեան անդ արդար դատիցիս, ապա և իմ և ունկնդրացս թողեալ լքեալ զհայաստան աշխարհ, եկցուք զհետ քո առ ազգս ճշմարիտ միաբանասէրս։ Եւ առ ո՞յս ոմանս յայնցանէ որ ընդ մերում ազգին զժամանակսն ձգեցին. առ խո՛ժան արդեօք ապականիչս աշխարհին, առ Սկիւթացին, առ Պարսիկն ծարաւի ցանգ արեան հայկազանց... Ի բաց տար զխուժադուժսն, ասէ դատախազ մեր, ուր բարեկիրթքն առաջի կան մեր ազնիք, Ամենացին իմաստախոհ, գոռ Լակեդեմոնացին և անկուսն Հռովմ։ Ո՞վ մեծարոյ անուանցն. այլ աւա՜ղ, զի այլ ընդայլոյ տեսանեմ ես 'ի նոսա գործ. կաց և կռիւ անվախճան 'ի Հելլէնս 'ի սկզբանէ հետէ, ոսերիմ գրգռութիւնս առ գիւցազունս Տրովադայ, խռովս ահագին մինչև ցաւուրս Ամենացւոցն թագաւորութեան. հակառակութիւն 'ի կրկին թագաւորս Սպարտայ, գրգիռք ընդ ազատանին և ընդ ռամիկն Աթենիոյ։ Զի՞ է զի անձնամահ լինի Լիկուրգոս, և Սոլոն անձնակամ տարագրի, եթէ վատահք իցեն 'ի միամտութիւն ժողովրդեանն. եղե՛ւկ նոցա. մին ոչ հանգուրժեաց օրինապահ կամ օրինազանց զազգ իւր տեսանել, միւսն յետ տասն ամեայ նժգեհութեան զամենայն ջանս իւր դեռևացեալս ետես, և զժողովուրդն պատառեալ 'ի

լեռնայինս և 'ի դաշտայինս և 'ի վաճառականս։ Պիսիտրատ, Մեգակղէս և Լիկուրգոս յազգասիրութենէ՝ ինչ ուսան արդեօք անհաչտ թշնամիս իրերաց զժողովուրդն առնել։ Իպպիան այն ոչ Մերուժան Աթենայ իցէ, և Պաւսանիաս ոչ Վասակ Լակոնիոյ. էր սակս արձանք Արմոդեայ և Արիստոգիտոնի կանգնեցան. վասն էր խելաշուրջն իշխան 'ի փառաւորութեան անդ աշխարհին իւրոյ բանագնաց ընդ Մարդոնիոսի լինէր 'ի մատնութի։ Միաբանական սիրոյն իցեն արգասիք քսանեւեօթն ամաց պատերազմն Պեղոպոննիսեան որ լքոյց պարտասեաց զԵլլադա, և արդեալ զնոսա զդէմս ունել յղկնիան Պարսից և Մակեդոնացւոց։ Մինթէ Պերիկղէայն և Աղկիբիադեայ մեռաք թեթիւ իցեն քան զՄեծաստայն և զԱշոտոյ, կամ սոցա զեղջն և նահատակութիւնք փոքր ինչ առ նոցայովքն իցեն։ Բամբասին մերքն իբրև անտեսողք լաւ որերոյն երբախտեաց. և Յունաստան զինչ հատոյց Միլտիադեայ, զինչ Թեմիստոկղի, զինչ ինչ Եպամինոնդայ և այլոց։ Եթէ իբրու հակառակասելք ոմանք դեղ մահու արբուցին մերքն Կերսիսի և Տրդատայ, Աթենացիք առ ինչ զմոլեխինդն Սոկրատայ, կամ Սպարտացիք առ իմէ մահ Նիւթեցին Ագիսեայ։

Այլ աղէ թողցուք զԵլլադա, և 'ի Լատին անցցուք. անդ ցուցեալ ոսոխին ազգ հզօր և աշխարհակալ, ասէ. ահա ժողովուրդ որ օրէնս ետ աշխարհի, միաբանութեամբ և քաջութեամբ զօրացեալ. ընդէր ոչ նոյնպէս և տուն Թորգոմայ, ընդէր ոչ նոցին և հայք նախանձաւոր։ — Նոցա՞ նախանձաւորք, Հռովմայեցւոց. — Թողեալ ուրեմն Հայկայ զՆերբովթ, զհետ հարաստանն սնդիցի իբրև զՀռոմուլոսն զայն, և վերմ անկեան դաստակերտին իւրոյ զդի նորին ցուրտ արկանիցէ. և Աբամայ զանց զշահատակութեամբք արարեալ, զՏուղղոսին սիստացի. և դու տիրասէրդ իմ ժողովուրդ, դու յօրինակ զլատինացին առեալ՝ անդուլ կոգիցես ընդ աւագանին, հուպ ընդ հուպ կանգնեալ և կործանեալ սահենակաւ և համարակաւ, բդեաշխս և տրիբունս, և մերթ ամենեցուն միանգամայն թիկունս դարձուցեալ՝ զերեսս 'ի լերինս և յամայիս հաստատիցես։ Է՜հ, թող շնորհս կալցի Հռոմ իւրումն բաղդի, եթէ բաղդ արժան իցէ կոչել զայն, զի տաճարն Յանոսի բացեալ կայր հանապազորդ։ Զայն տուք, նահանգք Այրարատայ. տեսէք արդեօք 'ի ձեզ երբէք զՍիւղա և զՄարիոս, որ գեռս արեան խաղացուցին յիւրեանց իսկ ժողովրդեանն. կամ թէ զվերհաղորդսն զԿեսար և զՊոմպէոս, որք անմիաբանութեան իւրեանց անձուկ համարեալ տապարէզ զՀռոմ և զԻտալիա, ածին ձգեցին զայն մինչև 'ի դաշտս Փարսաղեայ, և մինչև 'ի Մեմփիեայ բրգունս. անժոյժք յիշխանութեան, անժուժկալք յանիշխանութեան, անգութք յանմիաբանութեան, և 'ի միաբանութեան անդ անմիաբանք. 'ի միութի խաղաղութեան կարգին եռապետք, և յերիս զաշխարհն պատառեն։ Յուլեայ պանծալի թուի առաջին կոչել 'ի հիւղս քան երկրորդ յանին տիեզերաց. վասն այսորիկ օրէն վարկանի յուզել ընդ մարտս և զփառասիրութեան կիրս. և զաչացուս առաջնորդաւն հանդերձ՝ փառասիրութեամն ասեմ՝ անկեալ 'ի խորխորատ, ահագին խռովութեանց ճարակ թողու զաշխարհն. մինչև յաջողել Օգոստեայ զԱնտոնիոս զդեանել, և ամբառնալ 'ի գահ, որպէս զի գէտ ինն կացցէ 'ի բարձուն ողորմագին աւերակաց և արիւնոռոգ դաշտացն Լատինի։ Ո՞վ ոք 'ի մերոց թագաւորաց յանարգութիւն Դոմէտիանու և Ադրիանոսի խոնարհեցաւ, զի առ անմիաբանութեան ազգին հարկատու լինիցի Դակաց խժից։ Նա բնաւ երբ երևեցաւ Հապուհ ոք օտարածին 'ի գահ մեր ամբարձեալ, և Աստոմ բարձակցօքն ոչ արհամարհեաց զնովաւ. իսկ Հռովմայեցիք աւանիկ իբրև առ 'ի չգոյէ որդւոց Սկիպիոնի և Կեսարու՝ զարաբացին զՓիլիպպոս 'ի գահ մատուցանեն, և զչամբուշ մանուկն ասորի, և զհսկայն գոթացի։ Երկուս և երիս թագաւորս ետես Հայաստան առ Բագրատունեաց, այլ ոչ վեց ինքնակալս, որպէս Հռովմ յետ Դիոկղետիանու և Կոստանդիանոսի և առ Գաղիենեաւ...։ Դեգերիցիմք այլ ևս 'ի սահմանս Հռովմայ, եթէ այլուր դարձ արասցուք։ — Ոչ, կաց, ասէ ոսոխն. և 'ի կշիռ ընդ Հռովմայեցւոցն հայրենասիրութեան եգեալ զմերոցն մատնութիւնս, 'ի միտ առցես՝ եթէ ո՞րչափ գլեն նոքա զՀայովքս յազգասիրութեան։ Այլ 'ի զուր է քեզ. մատնութեանց և դաւաճանութեանց պատճառք ոչ միշտ ազգատեցութիւնն է և չմիաբանութիւն, այլ բազում անգամ և մատնեցելոյ ազգին տկարութիւն, և այնր որում մատնին՝ հզօր զօրութիւն. ապա զինչ զարմանք իցեն, եթէ Հայք ոմանք 'ի նուաղել պետութեան իւրեանց և 'ի պաշարել 'ի բուռն և 'ի մեծամեծ թագաւորութեանց՝ մատնոտու հայրենեացն լեալ իցեն. կամ թէ Հռովմայեցիք 'ի ժամանակի այնչափ բարգաւաճանացն և տիրապետելոյ 'ի վերայ ամենայն ազգաց որ շուրջ զնոքաւք, ոչ հատուածեալ իցեն առ նոսա. զոր թէ առնէին՝ ոչ արդեօք անմիաբանս, այլ անմիտս և պանդոյրս յիրաւի կոչէաք զնոսին։ Դարձցուք ապա, դարձցուք։ Եւ յմիվ արդեօք յետ պանչլոյն Հռովմայ, բայց առ ազգն ատուածընթիր։ Այլ բաբէ, և 'ի տան անդ Ատուածոյ խռովք են. Ատուածք ինքնին բոլոր հարկանեն զանմիաբանութենէ նոցա ընդ իւր և ընդ միմեանս։ Հապա դարձցուք անդրէն 'ի Հայաստան. մանաւանդ թէ 'ի մեզ ինքեանս դարձցուք՝ եթէ դամ մի գթեցաք 'ի կարծիս ոսոխին. զի թէ անմիաբանութեան տեղի դուցէ 'ի Հայս սակս որոց ասացաքն ցայս վայր, անմիաբանագոյն են քան զնոսա այլք յազգաց. և չիք ոք յաշխարհի ազգ միաբան. իսկ եթէ այլքն 'ի վերայ այսչափ թերութեանց տակաւին ևս միաբանասէրք կարծիցին, ապա առաւել քան զնոսա ազգս մեր. զոր լիովին ևս ցուցից 'ի մեծոյ...։

Շատ է արդ. լուեսցէ անշուշտ 'ի սպառ լեալս ընդդիմաբանին, զի պարտեցաւ Նժար նորա, և ամբարձաւ մեծ միաբանութեան. այլ հաճեսցի աղաչեմ իմասասուն ժողովս երկայնամտել և փոքր մի 'ի լուր դրուատելի միաբանութեան Թորգոմական ազգիս։